

Սեպտեմբեր ամսվա կլիմայական բնութագիրը և ամսական կանխատեսումը (2016թ.)

Ամռան ավարտը կլիմայական բնութագրմամբ համարվում է այն ժամանակը, երբ օդի օրական միջին ջերմաստիճանն իջնում է 15°C ցածր: Հանրապետությունում այդ անցումը տեղի է ունենում երեք ամսվա ընթացքում՝ հուլիսի առաջին օրերից (Բարձր լեռնային գոտիներում) մինչև հոկտեմբերի երրորդ տասնօրյակը (Արարատյան հովտում, Սյունիքի և Տավուշի ցածրադիր մասերում): Այնպես որ, տաք շրջաններում սեպտեմբերին դեռևս շարունակվում է եղանակային պայմանների ամառային ռեժիմը, իսկ լեռնային շրջաններում սկսվում է աշունը:

Սեպտեմբերին օդի միջին ամսական ջերմաստիճանը հանրապետության տարածքի համար 13°C է: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը Արարատյան դաշտում և ծայր հարավ-արևելքում դեռևս կարող է հասնել 35...40°C, նախալեռնային շրջաններում՝ 33...38°C, լեռնային շրջաններում՝ 30...31°C:

Օդում առաջին ցրտահարությունը մեծ մասամբ դիտվում է լեռնային շրջաններում սեպտեմբերի վերջին, սակայն առանձին տարիների (1997թ.) այն կարող է դիտվել նույնիսկ ամսվա առաջին կեսին:

Երևանում սեպտեմբերը համարվում է տարվա մեջ ամենաբարեհաճ ամիսը՝ առաջին տասնօրյակում օդի օրական միջին ջերմաստիճանը 22...23°C է, երկրորդում՝ 20°C և երրորդում՝ 18...19°C:

Հանրապետության տարածքում տեղումները բաշխվում են անհավասարաչափ, միջինը դիտվում են 33մմ, Արարատյան դաշտում, Վայոց ձորում և Սյունիքի հովիտներում՝ 6-10մմ, Լոռիում՝ 50-60մմ, Սյունիքի նախալեռներում՝ 60-65մմ:

Բազմամյա տվյալներով 12 տարի Երևանում սեպտեմբերին տեղումներ չեն դիտվել և եղել է տարի (1932թ.), երբ տեղումների քանակը կազմել է 86մմ, որը գերազանցել է նորման 9 անգամ: Առատ տեղումներով տարի է եղել նաև 2009թ. սեպտեմբերը, երբ ամսական տեղումների քանակը Երևանում կազմել է 70մմ, որն էլ գերազանցել է նորման 7 անգամ: Տաշիրում տեղումների առավելագույն քանակը եղել է 218մմ, իսկ նվազագույնը՝ 12 անգամ նորմայից պակաս՝ 5մմ (1950թ.):

Տեղումներով օրերի թիվը ևս անհավասարաչափ է բաշխված՝ Լոռիում միջինը 12 օր, Արարատյան դաշտում՝ մինչև 4 օր: Բարձր լեռնային շրջաններում և Գեղարքունիքում ամսվա երրորդ տասնօրյակում կարող է առաջանալ ձյան ծածկ:

Ամպրոպային գործունեությունը թուլանում է՝ միջինը դիտվում է 3-6 օր, չնայած առանձին տարիների հյուսիսային կեսում կարող է դիտվել 10-20 օր: Կարկուտ դիտվում է հազվադեպ: Սյունիքում հաճախակի դիտվում է մառախուղ՝ նախալեռներում՝ 6-11, իսկ լեռնային շրջաններում՝ 14-19 օր:

Չնայած սեպտեմբերին որոշ չափով ավելանում է արևմտյան ուղղության քամիների կրկնելիությունը, սակայն դրանց արագությունը էապես չի փոխվում:

Արարատի և Արմավիրի մարզեր, Արագածոտնի նախալեռներ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 20...21 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչև 33...35°C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչև 10...12°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 5...6°C, առավելագույնը՝ 34...35°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 7...10 մմ):

Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզեր, Արագածոտնի մարզի լեռնային շրջաններ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 11...13 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչև 22...26°C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում, գիշերը մինչև 2...5°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -1...+2 °C, առավելագույնը՝ 25...27°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 25...35 մմ):

Լոռու մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 12...15 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչև 22...25°C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը 2...6 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ -1...+2 °C, առավելագույնը՝ 26...28 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 32...46 մմ):

Տավուշի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 15...18 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքից: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչև 26...30°C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչև 5...9 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 3...7°C, առավելագույնը՝ 28...29°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մետ (նորման՝ 38...40 մմ):

Վայոց Ձորի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հովտային շրջաններում 20...21 °C, լեռնային շրջաններում՝ 13...14°C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը հովտային շրջաններում մինչև՝ 33...35 °C, լեռնային շրջաններում՝ 21...25°C, երրորդ տասնօրյակում օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հովտային շրջաններում մինչև՝ 10...12°C, լեռնային շրջաններում՝ 3...5°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հովտային շրջաններում՝ 6...7°C, լեռնային շրջաններում՝ 0...+1°C, առավելագույնը՝ հովտային շրջաններում 34...35°C, լեռնային շրջաններում՝ 24...25°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ հովտային շրջաններում 10...15 մմ, լեռնային շրջաններում 22...23 մմ):

Սյունիքի մարզ

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է հովտային շրջաններում 19...21 °C, լեռնային շրջաններում՝ 12...13 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը հովտային շրջաններում մինչև՝ 33...35 °C, լեռնային շրջաններում՝ 23...26 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը հովտային շրջաններում մինչև՝ 7...10°C, լեռնային շրջաններում՝ 4...6 °C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ հովտային շրջաններում՝ 7...9°C, լեռնային շրջաններում՝ 4...5°C, առավելագույնը՝ հովտային շրջաններում 32...34°C, լեռնային շրջաններում՝ 28...29°C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ հովտային շրջաններում 13...43 մմ, լեռնային շրջաններում 19...61 մմ):

Երևան քաղաք

Օդի ամսական միջին ջերմաստիճանը սպասվում է 20...21 °C, որը մոտ է բազմամյա միջին արժեքին: Առանձին օրեր հնարավոր է օդի ջերմաստիճանի բարձրացում ցերեկը՝ մինչև 33...35 °C, երրորդ տասնօրյակում՝ օդի ջերմաստիճանի նվազում՝ գիշերը մինչև 8...10°C (դիտված բազմամյա միջին բացարձակ նվազագույնը՝ 6...8°C, առավելագույնը՝ 34 °C): Ամսական տեղումների քանակը ենթադրվում է նորմային մոտ (նորման՝ 9 մմ):

Սևանա լճի 2016թ. հուլիս ամսվա ջրային հաշվեկշիռը

Սևանա լճի ավազանում հուլիսին ամսական միջին ջերմաստիճանը եղել է 15.7...17.4°C, որը նորմայի սահմաններում է դրական շեղումով:

Ամսվա ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հուլիսի 21-ին՝ 30.0°C, երբ օրական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 2.4...5.8 աստիճանով:

Ամսվա ամենացածր ջերմաստիճանը գրանցվել է հուլիսի 12-ին՝ 5.0...9.0°C, երբ օրական միջին ջերմաստիճանը նորմայից ցածր է եղել 2.2...4.0 աստիճանով:

Ամսվա ընթացքում տեղումները կազմել են նորմայի 125-180% (Շորժայում՝ 96%, Մարտունիում՝ 218%):

Ամսվա ընթացքում գետերով ջրի մուտքը Սևանա լիճ կազմել է նորմայի 93%, տեղումների քանակը լճի մակերևույթի վրա եղել է 71.3 մլն.խոր.մ, որը կազմում է նորմայի 140%, գոլորշացումը լճի մակերևույթից եղել է 145.5 մլն.խոր.մ, որը կազմում է նորմայի 128%:

Սևանա լճի մակարդակը ամսվա ընթացքում իջել է 5.1սմ և կազմել՝ 1900.717մ:

| Ջրային հաշվեկշռի տարրերը | Ը ն դ ա մ Ե ն ը (մլն. մ ³) | | | ամսվա ընթացքում |
|--------------------------------|--|-------|-------|-----------------|
| | ըստ տասնօրյակների | | | |
| | 1 | 2 | 3 | |
| ՄՈՒՏՔ | | | | |
| Լիճը թափվող գետերով | 19.6 | 14.2 | 11.8 | 45.6 |
| Արփա - Սևան թունելով | 2.48 | 2.17 | 0.73 | 5.38 |
| Տեղումները լճի մակերևույթի վրա | 25.2 | 11.5 | 34.6 | 71.3 |
| Ստորերկրյա հոսք | 2.60 | 2.60 | 2.70 | 7.90 |
| Այդ թվում Արփա-Սևան թունելով | 0.39 | 0.39 | 0.40 | 1.18 |
| Ընդամենը | 50.27 | 30.86 | 50.23 | 131.36 |
| ԵԼՔ | | | | |
| Հրազդան գետով | 22.35 | 17.47 | 27.81 | 67.63 |
| Գոլորշիացում լճի մակերևույթից | 38.5 | 40.5 | 66.5 | 145.5 |
| Ստորերկրյա հոսք | 0.40 | 0.40 | 0.40 | 1.2 |
| Ընդամենը | 61.25 | 58.37 | 94.71 | 214.33 |
| Կուտակում (նվազում) | -10.3 | -19.3 | -35.9 | -65.5 |
| Բացարձակ անկապք | -0.68 | -8.21 | -8.58 | -17.47 |
| Հարաբերական անկապք % | 1.11 | 14.1 | 9.10 | 8.15 |

| Բնութագրեր | Լճի մակարդ.մ | Լճի մակերեսը.կմ ² | Լճի ծավալը.կմ ³ |
|------------------|--------------|------------------------------|----------------------------|
| Ամսվա առաջին օրը | 1900.768 | 1281.050 | 38.5204 |
| Ամսվա վերջին օրը | 1900.717 | 1280.567 | 38.4549 |
| Միջին ամսական | 1900.727 | 1280.662 | 38.4677 |

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում - 0.051 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 01.01.16 31.07.16 ընթացքում 0.527 (մ)
 Մակարդակի փոփոխությունը 31.07.15 31.07.16 ընթացքում 0.260 (մ)

«ԱԻՆ Հիդրոմետր ծառայության
 տնօրեն՝ Լ.Վարդանյան»